Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

Շաբաթական Զեկույց

10 դեկտեմբեր 2012

Հասկանալ ֆինանսական շուկաները, տեղեկատվությունը և վերլուծությունները գիտակցված ներդրումների նպատակով

Ձեզ են ներկայացնում TeleTRADE Հայաստանի շաբաթական զեկույցների շարքի առաջին հրապարակումը՝ առաջարկելով միջազգային շուկայական միտումների և ֆինանսական ու տնտեսական զարգացումների բազմակողմանի վերլուծություն՝ կենտրոնանալով Հայաստանի վրա, բայց նաև անդրադառնալով համաշխարհային շուկայական միտումներին և զարգացումներին ԱՄՆ-ում,Եվրոպայում և Ասիայում:

Ձեր ուշադրությանը ներկայացնում ենք՝

- ԱՄՆ-ում ներդրողների վստահությունը շարունակում էր թույլ մնալ՝կապված «բյուջետային անդունդի» իրավիճակի շուրջ, երբ 600 միլիոն դոլարը, որը կգոյանա ծախսերի կրճատման և հարկերի բարձրացման միջոցով , կարող է նոր ճգնաժամի պատճառ դառնալ: Այնուամենայնիվ, դրական նշանները՝ ներառյալ ցածր

գործազրկությունը, երրորդ շաբաթն անընդմեջ հանգեցրին ամերիկյան բաժնետոմսերի համեստ աճին:

- Եվրոպական շուկաները տատանվեցին գալիք տարվա սկզբին Գերմանիայում ճգնաժամի հավանականության պատճառով, քանզի աճը դանդաղեց, գործազրկությունը աճեց և արդյունաբերական արտադրանքը նվազեց: Պորտուգալիայում տնտեսությունը երրորդ քառորդում նվազեց 3,5 տոկոսով , իսկ արդյունաբերական արտադրանքը Մեծ Բրիտանիայում նվազեց: Իռլանդիայում կառավարությունը հրապարակեց 2013թ. նոր բյուջեն, որը ներառում է խիստ միջոցներ բյուջետային դեֆիցիտը կրճատելու նպատակով:

- Կարևոր քաղաքական անցումից հետո չինական տնտեսությունը ամրապնդվեց, քանզի արդյունաբերական արտադրանքը ընդլայնվեց և վերջին վիճակագրությունը նշանավորեց տնտեսական վերակնգնման սկիզբը՝ կանխատեսելով չորրորդ քառորդում ՀՆԱ-ի աճ, որը , սակայն կհամընկնի նաև ինֆլյացիայի աճի հետ: 4,23 միլիրադ դոլար արժողությամբ նոր գործարքով չինական ներդրողները American International Group (IAG) ապահովագրող ընկերությանը պատկանող ինքնաթիռների լիզինգային բիզնեսում ստացան 80,1 տոկոս մասնաբաժինը: Եթե գործարքը հաստատվի ամերիկյան ռեգուլյատորների կողմից, դա կլինի չինական ներդրողների կողմից ամերիկյան բիզնեսի երբևէ ամենախոշոր ձեռքբերումը: Ճապոնական տնտեսությունը պաշտոնապես մտել է անկման շրջան: վերջինս տառապում է թույլ արտահանումներից և հանդիանում է ՀՆԱ-ի հարաբերակցությամբ աշխարհում ամենախոշոր պարտքը ունեցող պետություններից մեկը:

Ամերիկյան շուկաներում ներդրողների վստահությունը սասանվեց՝

Ամերիկյան շուկայում խոշոր ներդրումային որոշումները հետաձգվեցին ՝ կապված ***այսպես կոչված «բյուջետային անդունդի» վերաբերյալ ներդրողների մտահոգությունների հետ:*** Վերջինս մեկնարկը նախանշված է գալիք տարվա սկզբին, ինչը կնա'անակի ավտոմատ կերպով 600 միլիրադ դոլարի տնտեսում ծախսերի կրճատման և հարկերի բարձրացման միջոցով՝ ահազնացնելով ***վախերը, որ ամերիկյան տնտեսությունը կարող է հետ գլորվել դեպի ճգնաժամ:*** «Բյուջետային անդունդի» հունվարիմեկյան վերջնաժամկետը հաստատվել էր Կոնգրեսի կողմից , որպես ծախսերի և հարկերի առումով ֆիսկալ անհամաձայնությունների բանակցային կարգավցորման միջոց: Ընդհանուր առմամբ շուկան միշտ աճում էր, որբ ներդրողները ավելի վստահ էին համաձայնության հարցում: Եթե կոնգրեսը չկարողանա համաձայնության գալ վերջնաժամկետի լրանալու պահին, ապա այդ արդյունքը կնշանակի ճգնաժամային իրավիճակ 2013թ. առաջին կեսի ընթացքում:

Ակնկալվում է , որ այդ դեպքում գործազրկությունը 2012թ. նոյեմբերի 7,7 տոկոսից կբարձրանա մինչև 9,1 տոկոս 2013թ. չորրորդ քառորդում:

Կան, սակայն, նաև դրական նշաններ, քանզի պահանջարկը ավելացել է և բիզնես ներդրումները կվերականգնվեն 2013թ.: Ոչ ռազմական կապիտալի ապրանքների պատվերները, բացառությամբ ինքնաթիռների՝ հոկտեմբերին աճեց 2,9 տոկոսով, որը հանդիսանում է 8 ամիսների ընթացքում ամենախոշոր աճը՝ հետևելով սեպտեմբերյան 0,5տոկոս անկմանը: Այս միտումը փորձության կենթարկվի գալիք շաբաթ, քանզի մոտակա օրերին կհրապարակվի ԱՄՆ-ի տնտեսական ինդիկատորների մի շարք՝ ներառյալ մանրածախ վաճառքները, մեծածախ արտադրական պաշարների թվերը, արդյունաբերական արտադրանքը, գործարար պաշարների եւ արտադրողի գների ինդեքսը (PPI), ինչպես նաև միջազգային առևտրային զեկույցներ արտահանման և ներմուծման գների և առևտրային բալանսի վերաբերյալ: Ամերիկյան շուկայական ակտիվությունը նույնպես գրանցեց սա, քանզի S&P 500-ը և Dow Jones Industrial Average-ը ***երրորդ շաբաթն անընդմեջ համեստ աճ են գրանցում:***

Անցած շաբաթ ևս մեկ դրական նորությունը կապված էր նոյեմբերին Ամերիկյան տնտսեությունում 146,000 նոր աշխատատեղերի ստեղծման, ինչպես նաև ***գործազրկության մակարդակի նվազման*** հետ, որը նոյեմվերին ընկավ մինչև 7,7 տոկոս՝ 2008թ. դեկտեմբերից նվազագույն մակարդակը, թեպետ անկումը կապված էր այն փաստի հետ, որ աշխատողները դուրս մնացին աշխատուժի ցուցակից:



Գերմանական Կենտրոնական բանկը զգուշացնում է գալիք ճգնաժամի մասին:

Անցած շաբաթ արված հայտարարության մեջ ***Գերմանական Կենտրոնական բանկը զգուշացրեց, որ երկիրը եկող տարի կկանգնի ճգնաժամի վտանգի առջև***՝ ավելացնելով, որ ըստ կանխատեսումների՝ գերմանական տնտեսությունը 2013թ. կարող է աճել համեստ 0,4 տոկոսով, ինչը լուրջ նվազում է հանդիսանում հունիսին արված 1,6 տոկոս կանխատեսումից: Այլ վիճակագրական տվյալներ ևս հաստատում են ճգնաժամի վտանգը ,քանզի կանխատեսվում է, որ եկող տարի գործազրկությունը Գերմանիում 2012թ. 6,8 տոկոսից կաճի մինչև 7,2 տոկոս: Գերմանական արդյունաբերական արտադրությունը հոկտեմբերին կրճատվեց 2,6 տոկոսով՝ հասնելով մինչև սեպտեմբեր ամսվա նվազագույն՝ 1,3 տոկոս մակարդակը:

Երկարաժամկետ առումով, այնուամենայնիվ, Բունդեսբանկը հավելեց նաև, որ ***գերմանական ճգնաժամը ժամանակավոր բնույթ կունենա***, և արդեն 2014թ. կանխատեսվում է 1,9 տոկոս աճ, եթե եվրոզոնայի բարեփոխումները շարունակվեն և համաշխարհային տնտեսությունը վերականգնվի: Բունդեսբանկի զգուշացումը հետևում է Եվրոպական Կենտրոնական Բանկի կանխատեսումներին համաձայն որի՝եվրոզոնայի 17 պետությունները տնտեսությունները այս տարվա երրորդ քառորդում կշարունակեն նվազել՝ հետևելով 2009թ. սկսված ճգնաժամին:

Պորտուգալիայում տնտեսությունը 2012թ. երրորդ քառորդի տվյալներով նվազեց 3,5 տոկոսով՝ երկրորդ քառորդում նվազելով 3,1 տոկոսով: Մեծ Բրիտանիայում արդյունաբերական արտադրանքը նվազեց 1,3 տոկոսով: ***Իռլանդիայում կառավարությունը հրապարակեց 2013թ. նոր բյուջեն,*** որը ներառում է խիստ միջոցներ բյուջետային դեֆիցիտը կրճատելու նպատակով: Նախատեսվում է 3,5 միլիարդ ($4.58 միլիարդ) եվրոյի խնայում հարկերի բարձրացման և ծախսերի կրճատման միջոցով՝ արտացոլելով Իռլանդիայի հանձնառությունը նախորդ ֆինանսական օգնության փաթեթների պայմանների հանդեպ Ըստ կանխատեսումների՝ Իռլանդիան կկարողանա պարտատոմսերի շուկա վերադառնալ 2014թ. ավարտին:

Հայացք Ասիային

Չինաստանի նոր ղեկավարության իշխանության գալուց հետո Չինաստանի կոմունիստական կուսակցության առաջնորդ Խի Ջին Պինգը իր առաջին հասարակական միջոցառումներից մեկի ընթացքում որոշեց կազմակերպել բարեփոխումների անցկացման իր

հանձնառության սիմվոլիկ ցուցադրություն՝ այցելելով Հարավային Չինաստանի Շենժեն քաղաքը, որը հայտնի է որպես շուկայական բարեփոխումների «ինկուբատոր»: Քաղաքական փոփոխություններին աջակցեց նաև ***Չինաստանի տնտեսությունը, որը ամրապնդվեց նոյեմբերին,*** քանզի արդյունաբերական արտադրանքը տարեկան հաշվարկով հոկտեմբերի 9,6 տոկոսից նոյեմբերին հասավ մինչև 10,1 տոկոս, ինչը մարտից սկսած ամենախոշոր աճն է հանդիսանում: Այլ միտումները ևս մատնանշում են տնտեսական աճը՝ ներառելով 6,4 տոկոսից մինչև 7,9 տոկոս աճ էլեկտրաէներգիայի արտադրության մեջ, ինչպես նաև համեստ 2 տոկոսանոց աճ սպառողական գներում՝ արտացոլելով ***ինֆլյացիայի աճող միտումը***: Ընդհանուր առմամբ, առկա վիճակագրությունը ցույց է տալիս, որ ***չինական տնտեսությունը սկսել է վերականգնվել*** տարվա ընթացքում գրանցաց կտրուկ անկումից՝ ակնարկելով, որ 2012թ. չորրորդ քառորդում երկրի ՀՆԱ-ն կարող է աճել այն բանից հետո, երբ Չինաստանը երրորդ քառորդում գրանցեց 7,4 տոկոս երեք տարվա հուսախաբ անող նվազագույն կետը:Ասիական զարգացումներից կարելի է առանձնացնել նաև երրորդ անգամ չորս ամսվա մեջ Մալազիական արտահնումների գրահնցաց անկումը այն ժամանակ, երբ Թայվանական արտահանումները նոյեմբերին աճեցին 0,9 տոկոսով:

Անցած հանգստյան օրերի ընթացքում ***չինական ներդրողները American International Group (IAG) ապահովագրող ընկերությանը պատկանող ինքնաթիռների լիզինգային բիզնեսում ստացան 80,1 տոկոս մասնաբաժինը:*** Չինական ներդրողները, որոնցթվում են նաև China Aviation Industrial Fund-ը, New China Trust-ը և P3 Investments group-ը, համաձայնվեցին գործարքի համարվճարել 4,23 միլիրադ դոլար, ինչը նաև ներառում է հնարավորություն հավելյալ 9,9 տոկոս մասնաբաժինը ձեռք բերելու համար: Եթե այդ հնարավորությունը կիռարվի, չինական այլ ներդրողներ ևս կարող են բաժտետեր դառնալ, այդ թվում նաև New China Life Insurance-ը և Hong Kong-based ICBC International-ը, որը հանդիսանում է աշխարհի ամենախոշոր բանկերից մեկի՝ չինական պետական Industrial and Commercial Bank of China-ի մասնաճյուղը:

Եթե գործարքը հաստատվի ամերիկյան ռեգուլյատորների կողմից, դա կլինի ***չինական ներդրողների կողմից ամերիկյան բիզնեսի երբևէ ամենախոշոր ձեռքբերումը***: Չինականան ներդրումը կապված է նրանց երկարաժամկետ ռազմավարության հետ, որի նպատակն է բարելավել և ընդլայնել չինական ճամփորդային ինֆրակառույցները և օդանավային խմբերը: AIG-ի համար այս վաճառքը կապված է «ոչ հիմնական ակտիվները» վաճառելու փորձերի հետ, որի նպատակն է աջակցել ընկերության վերականգմանը Ամերիկյան կառավարության օգնության հսկայական փաթեթը ստանալուց հետո :

Համաձայն այս առավոտ հրապարակված զեյուցների՝ ***Ճապոնական տնտեսությունը պաշտոնապես մտել անկման շրջան,*** քանզի Ճապոնական ՀՆԱ-ն տարեկան հաշվարկով հուլիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում նվազեց 3,5 տոկոսով. անկում երկու

իրար հաջորդող քառորդներում, ինչը համապատասխանում է տնտեսական ռեցեսիայի տեխնիկական սահմանմանը: Թեպետ Ճապոնիան շարունակում է նման համաշխարհային երրորդ տնտեսությունը, վերջինս տառապում է թույլ արտահանումներից և հանդիանում է ՀՆԱ-ի հարաբերակցությամբ աշխարհում ամենախոշոր պարտքը ունեցող պետություններից մեկը: Կանխատեսվում է , որ 2012թ. մնացած ժամանակահատվածում ՀՆԱ-ն կշարունակի նվազել:

Ապրանքային շուկաներ՝

Ապրանքայի շուկայում հիմնական շարժիչ ուժը երեքշաբաթյա նավագույն կետորից ***նավթի գների աճն էր***, ինչը մասնավորապես կապված էր չինական հում նավթի վերամշակման մակարդակի էական աճի հետ՝ացյալ տարվանից հասնելով ռեկորդային 9,1 տոկոսին նոյեմբեր ամսին, օրեկան 10,2 միլիոն բառել, և խթանվեց չինական արդյունաբերական արտադրության մեջ 10,1 տոկոս աճով: Այնուամենայնիվ, այս շաբաթ կայանալիք Նավթ արտահանող պետությունների կազմակերպության (OPEC) հանդիպումով, հավանաբար ***նավթի համաշխարհային շուկաները կկայունանան, քանզի OPEC-ը*** վճռական է տրամադրված ***իր արտադրության քվոտաները պահպանել օրեկան 30 միլիոն բարել մակարդակի վրա:***

Հայստանյան իրադարձություններ՝

Հայաստանի խորհրդարանը անցած շաբաթ հաստատեց 2013թ. պետական բյուջեն, որը ներառում է ***պետական ծախսերում մոտ 1 տոկոս աճ՝*** 1,15 տրիլիոն դրամ ($2.84 միլիարդ) : Այնտեղ արտահայտված է նաև մոտ 120 միլիրադ դրամ ծավալով ֆիսկալ դեֆիցիտը, որը

կոշտ հաշվարկներով հավասարազոր է Հայաստանի ՀՆԱ-ի 2,6 տոկոսին, և դեֆիցիտը ՀՆԱ-ի համեմատ հարաբերակցությունը 2012թ. կկազմի 2,8 տոկոս: Նոր պետական բյուջեի համաձայն՝ կառավարությունը խոստացել է կրճատել ***դեֆիցիտը հարկերի հավաքման համընդհանուր ծավալները ավելացնելով*** նախանշված 13 տոկոսով, որի արդյունքում հնարավոր կլինի գանձել ամբողջական 993 միլիարդ դրամ: 2013թ. բյուջեն հիմնված է նաև ***հայկական տնտեսության ակնկալվող 6,2 տոկոս աճի վրա***՝ հետևելով 2012թ. 7 տոկոսանոց աճի կառավարության կողմից արված կանխատեսումներին: Վերջին տվյալների համաձայն՝ ***2012թ. երրորդ քառորդում հայկական ՀՆԱ-ն ավելացավ 9,3,*** ինչը համապատասխանում է անցյալ տարվա երրորդ քառորդի աճի մակարդակին:

Միաժամանակ, ***Հայաստանի կառավարությունը մերժեց ընդդիմության առաջարկը*** ներմուծել նոր, ավելի ***ընդարձակ հակամենաշնորհային միջոցներ*** մենաշնորհները կրճատելու և մրցակցությունը բարելավելու նպատակով: Առաջարկված նոր օրենսդրությունը կպահանջեր կառավարության կողմից նոր ռազմավարություն «անօրեն մենաշնորհները վերացնելու համար շտապ միջոցներ ձեռնարկելու» առումով: Այդ միջոցները կներառեին նոր արգելքներ ընկերությունների համար սահմանափակելով նրանց հնարավորությունները ունենալ բաժնեմասերի մեկ երրորդից ավելին «տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում, բացառությամբ կոմունալ ծառայությունների ոլորտը» : Երկրորդ մասը կլիներ տուգանել այն բոլոր ընկերություններին, որոնք վճռական կերպով գերիշխող դիրք են գրավում տնտեսության որևէ կոնտրետ հատվածում:

Այնուամենայնիվ, որպես ***Հայաստանի տնտեսական ավելի խորը թույլության նշան***՝ 2012թ. երրորդ քառորդում ***արտասահմանյան ներդրումների ծավալները կրճատվեցին*** 35,2 տոկոսով անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ հասնելով 391 միլիոն դոլար մակարդակին: Կանադան հանդես եկավ որպես Հայաստանում առաջնային արտասահմանյան ներդրող՝ 4,4 տոկոս աճով, մինչև 102 միլիոն դոլար: Սա մասնավորապես կապված է հանքարդյունաբերության ոլորտում կանադական ներդրումների աճով: Ռուսական ներդրումները երրորդ քառորդում երկրորդ տեղում էին այն ժամանակ, երբ Շվեյցարիան գրանցեց ներդրումային ամենամե աճը, մինչև 38,8 միլիոն դոլար: Հայաստանում արվող արտասահմանյան ներդրումների մոտ կեսը՝ 45,6 տոկոսը, սահմանափակվում է հանքարդյունաբերության ոլորտով:

Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

TeleTRADE-ը FOREX շուկայի հիմնական խաղացողներից է և տիրապետում է աշխարհում ամենալայն ներկայացուցչական ցանցին՝ աշխարհի 20 երկրներում ունենալով 150 գրասենյակներ: Հիմնադրված լինելով 1994թ.՝ TeleTRADE-ը ճանաչված առաջամարտիկ է համարվում խորհրդատվական և միջազգային ֆինանսական շուկաներում ծառայությունների մատուցման բնագավառում: